ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում 2023թ. փետրվարի առաջին տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Փետրվարի առաջին տասնօրյակում 5-6 օր դիտվել են տեղումներ, փետրվարի 8-10-ին տեղումները դիտվել են թաց ձյան և ձյան տեսքով: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ասկերանում՝ 16մմ, Ստեփանակերտում և Մարտակերտում՝ 14սմ, Մարտունիում՝ 13մմ: Ստեփանակերտում փետրվարի 8-10-ին ձյան ծածկը կազմել է 3-9սմ, Ասկերանում, Մարտակերտում և Մարտունիում փետրվարի 10-ին՝ 1 սմ: Հանրապետության տարածքում 5-6 օր դիտվել է մառախուղ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել է +1.2^{0}C, նորմայից բարձր 1.3^{0}C-ով, Ասկերանում՝ +3.0^{0}C, Մարտունիում՝ +3.0^{0}C նորմայից բարձր 0.6^{0}C-ով և Մարտակերտում՝ +4.4^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է փետրվարի 1-ին և 4-ին՝ +8...+12^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը գիշերային ժամերին դիտվել է փետրվարի 4-ին և 10-ին ՝ -2... -5^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև -2....-6^{0}C, առավելագույնը բարձրացել մինչև՝ +13...+17^{0}C:

Փետրվարի առաջին տասնօրյակում քամու միջին արագությունը հասել է 1-3 մ/վրկ, պոռթկումները մինչև՝ 7-10մ/վրկ արագությամբ:

Օդի միջին տասնօրյակային հարաբերական խոնավությունը կազմել է 78-82%: